

## ՏԵՂԵԿԱՆՔ

### ՌԻՍԿԱՅԻՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՀԻՄՔՈՎ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), հիմք ընդունելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով ամրագրված դրույթը, որով, ի թիվս հայտարարագրերի վերլուծություն իրականացնելու օրենքով սահմանված այլ հիմքերի, Հանձնաժողովը լիազորված է իր որոշմամբ սահմանել հայտարարագրերի վերլուծության ռիսկային չափորոշիչ, 2022 թվականի հոկտեմբերի 19-ին կայացրել է թիվ 02-Լ որոշումը (հղումը՝ <https://cpcarmenia.am/files/legislation/779.pdf>, այսուհետ՝ Որոշում), որով սահմանվել է հայտարարագրերի վերլուծության ռիսկային չափորոշիչ և դրա հիման վրա հաստատվել է այն պետական պաշտոնների ցանկը, որոնց (այդ թվում՝ նրանց ընտանիքի անդամների) 2021 թվականի հայտարարագրերը ենթակա են Հանձնաժողովի կողմից վերլուծության:

Ստորև ներկայացվում են Որոշմամբ հաստատված պետական պաշտոնները (ընդամենը 95 պաշտոնատար անձ).

1	Նախագահ
2	Ազգային ժողովի նախագահ
3	Ազգային ժողովի նախագահի տեղակալներ
4	Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահներ
5	Վարչապետ
6	Փոխվարչապետեր
7	Նախարարներ
	Վարչապետի ենթակա մարմինների ղեկավարներ
8	ՀՀ Ոստիկանության պետ
9	Պետական վերահսկողական ծառայության ղեկավար
10	Ազգային անվտանգության ծառայության տնօրեն
	Կառավարության ենթակա մարմինների ղեկավարներ
11	Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավար
12	Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավար

13	Կադաստրի կոմիտեի ղեկավար
14	Կրթության տեսչական մարմնի ղեկավար
15	Միջուկային անվտանգության կոմիտեի նախագահ
16	Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավար
17	Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավար
18	Պետական եկամուտների կոմիտեի նախագահ
19	Վիճակագրական կոմիտեի նախագահ
20	Քաղաքաշինության կոմիտեի նախագահ
21	Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին ղեկավար
	Անկախ սահմանադրական մարմիններ
22	Մարդու իրավունքների պաշտպան
23	Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ և անդամներ
24	Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի նախագահ և անդամներ
25	Հաշվեքննիչ պալատի նախագահ և անդամներ
26	Կենտրոնական բանկի նախագահ և խորհրդի անդամներ
27	Գլխավոր դատախազ
	Քննչական մարմինների ղեկավարներ
28	Քննչական կոմիտեի նախագահ
29	Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ
	Ինքնավար մարմինների ղեկավարներ/ղեկավար կազմ
30	Տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովի նախագահ և անդամներ
31	Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահ և անդամներ
32	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահ և անդամներ

Ռիսկային չափորոշիչների հիման վրա իրականացված հայտարարագրերի վերլուծության արդյունքում հայտնաբերված իրավախախտումների կապակցությամբ հարուցվել է վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթ Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահի նկատմամբ (Որոշման ընդունման օրվա դրությամբ տվյալ պաշտոնը զբաղեցնող):

Վարույթը եզրափակվել է Հանձնաժողովի կողմից 2023 թվականի մայիսի 31-ին ընդունված «Վարչական տույժ կիրառելու մասին» որոշմամբ (հղումը՝ <http://cpcarmenia.am/files/legislation/1036.pdf>):

Հանձնաժողովի կողմից 19.10.2022 թվականին ընդունված N 02-L որոշման հիման վրա պետական պաշտոն զբաղեցնող անձանց (այդ թվում՝ նրանց ընտանիքի անդամների) հայտարարագրերի վերլուծության արդյունքում հայտնաբերվել են անհամապատասխանություններ թվով 31 հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց (այսուհետ՝ հայտարարատուներ) հայտարարագրերի վերաբերյալ, որոնցից՝

- Գույքի (դրամական մնացորդների, անշարժ գույքի, տրանսպորտային միջոցի, արժեթղթերի) հայտարարագրման վերաբերյալ՝ 28 դեպք,
- Եկամուտների հայտարարագրման վերաբերյալ՝ 7 դեպք,
- Շահերի հայտարարագրման վերաբերյալ՝ 8 դեպք,

#### **Գույքի հայտարարագրում դրամական մնացորդների վերաբերյալ դեպքերը՝**

Հայտարարատուների կողմից հայտարարագրված դրամական մնացորդների և Կենտրոնական բանկից ստացված տվյալների միջև հայտնաբերվել են թվով 22 անհամապատասխանություն, որոնցից թվով 6 դեպքերը վերաբերել են ավելի հայտարարագրված դրամական միջոցներին, թվով 11 դեպքերը վերաբերել են պակաս հայտարարագրված դրամական միջոցներին, թվով 5 դեպքերը՝ չհայտարարագրված դրամական միջոցներին:

*Հանձնաժողովը, հաշվի առնելով իր կողմից կայացված նախկին որոշումներով ձևավորված իրավակիրառ պրակտիկան, ինչպես նաև դիտարկելով վերոթվարկյալ արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ դեպքերի արդյունքում հանրային հաշվետվողականության ապահովման հնարավորությունը, կոռուպցիոն տեսանկյունից ռիսկայնությունն ու հանրային վրանգավորության աստիճանը, վերոնշյալ անհամապատասխանությունների վերաբերյալ քննարկման արդյունքում նվազ նշանակության է որակել վերոնշյալ դեպքերը՝ հետևյալ հիմքերի առկայությամբ պայմանավորված.*

• Հայտարարատուի կողմից չհայտարարագրված գումարի չափը չի գերազանցել պաշտոնատար անձի պաշտոնեական դրույքաչափի համար սահմանված աշխատավարձի զուտ չափը:

• Հայտարարատուի կողմից չհայտարարագրված գումարի չափը չի գերազանցել 200 000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը:

- Հայտարարատուի՝ առկա դրամական միջոցների մնացորդները արդեն իսկ հայտարարագրվել են նույն հայտարարագրի եկամուտների բաժնում, որպիսի պարագայում ներկայացվել են եկամտի ստացման տեսակը, աղբյուրը, չափը:

- Հայտարարատուի կողմից ներկայացված բանկային հաշիվների քաղվածքներով հաստատվել է այն հանգամանքը, որ վերջինիս կողմից տարբերությամբ հայտարարագրված եկամուտը գոյացել է բացառապես անձի օրինական եկամուտներից (օր.՝ աշխատանքի վարձատրությունից, կենսաթոշակից, վարկային գծով տրամադրված դրամական միջոցներից):

Նշված պարագայում Հանձնաժողովն էական է համարել այն, որ հայտարարատուի կողմից ներկայացվել են այնպիսի ապացույցներ, որոնցով հավաստվում է չհայտարարագրված դրամական միջոցների աղբյուրների օրինականությունը՝ ապահովելով պետական պաշտոն զբաղեցնող անձի հանրային հաշվետվողականության, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահության, պետական պաշտոն զբաղեցնող անձի կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեության՝ օրենսդրի կողմից հետապնդվող նպատակները:

### **Գույքի (անշարժ գույքի, տրանսպորտային միջոցների, արժեթղթերի) վերաբերյալ դեպքերը՝**

Հայտարարատուների կողմից հայտարարագրված անշարժ գույքի, տրանսպորտային միջոցների և արժեթղթերի մասով հայտնաբերվել է թվով 6 անհամապատասխանություն, որոնցից թվով 3 դեպքերը վերաբերել են չհայտարարագրված տրանսպորտային միջոցներին առնչվող տվյալներին, թվով 2 առևտրային կազմակերպություններում ունեցած բաժնեմասերին (արժեթղթերին) առնչվող տվյալներին, 1 դեպքը վերաբերել է սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքին վերաբերող տվյալի չհայտարարագրմանը:

*Հանձնաժողովը, հաշվի առնելով իր կողմից կայացված նախկին որոշումներով ձևավորված իրավակիրառ պրակտիկան, ինչպես նաև դիտարկելով վերոթվարկյալ արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ դեպքերի արդյունքում հանրային հաշվետվողականության ապահովման հնարավորությունը, կոռուպցիոն տեսանկյունից ռիսկայնությունն ու հանրային վրանգավորության աստիճանը, վերոնշյալ անհամապատասխանությունների վերաբերյալ քննարկման արդյունքում մի շարք դեպքեր որակվել են նվազ նշանակության՝ հետևյալ հիմքերի առկայությամբ պայմանավորված.*

Հանձնաժողովն արձանագրել էր, որ հայտարարագրման ենթակա տվյալը՝ ավտոմեքենան՝ փաստացի չի պատկանել հայտարարատուին, և նշվածով պայմանավորված, այն օտարվել էր հայտարարատուի կողմից հաշվետու ժամանակահատվածին նախորդող տարիներին:

- Հայտարարատուին պատկանող տրանսպորտային միջոցի վերաբերյալ բոլոր անհրաժեշտ տվյալները լրացվել են հայտարարագրի այլ՝ տվյալ տարվա սկզբում առկա տրանսպորտի միջոցի բաժնում, որպիսի պարագայում կոնկրետ բաժնում չհայտարարված նույն ավտոմեքենային վերաբերյալ անհրաժեշտ բոլոր տվյալները արդեն իսկ բացահայտված են նույն հայտարարագրում:

- Հայտարարատուն անշարժ գույքի սեփականատեր է դարձել սեփականաշնորհման արդյունքում, վերջինիս իրավունքը գրանցվել է այն ժամանակ, երբ եղել է անչափահաս: Հայտարարատուի անունով անշարժ գույքի սեփականությունը գրանցվել է դերևս 2003 թվականին, երբ վերջինս լինելով անչափահաս հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամ չի հանդիսացել:

- Հայտարարատուի կողմից առևտրային կազմակերպությունում ունեցած բաժեմասի (արժեթղթի) վերաբերյալ տվյալ չհայտարարագրելու առնչությամբ պարզվել է, որ Պետական եկամուտների կոմիտեից ստացված տվյալներով առևտրային կազմակերպությունը հաշվետու ժամանակահատվածում իրացման շրջանառություն չի ապահովել, ժամանակավոր դադարեցված են եղել նաև կազմակերպության գործունեությունը:

### **Եկամուտների վերաբերյալ դեպքերը՝**

Հայտարարագրման ենթակա եկամուտների կապակցությամբ հայտնաբերվել է թվով 7 անհամապատասխանություն, որոնցից թվով 4 դեպքը պակաս չափով հայտարարագրված եկամուտների առնչությամբ, 2 դեպքը ավել չափով հայտարարագրված եկամուտների առնչությամբ, 1 դեպքը՝ չհայտարարագրված եկամտի վերաբերյալ:

*Հանձնաժողովը, հաշվի առնելով իր կողմից կայացված նախկին որոշումներով ձևավորված իրավակիրառ պրակտիկան, ինչպես նաև դիտարկելով վերոթվարկյալ արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ դեպքերի արդյունքում հանրային հաշվետվողականության ապահովման հնարավորությունը, կոռուպցիոն տեսանկյունից ռիսկայնությունն ու հանրային վրանգավորության աստիճանը, վերոնշյալ անհամապատասխանությունների վերաբերյալ քննարկման արդյունքում*

*նվազ նշանակության է որակել վերոնշյալ դեպքերը, որոնք պայանանավորվել են այն հանգամանքով, որ այդ եկամուտները ստացվել են մեկ աղբյուրից և հանդիսացել են վերջիններիս զուտ աշխատանքի վարձատրությունը: Միաժամանակ, նշված դեպքերում Պետական եկամուտների կոմիտեից ստացված եկամուտների վերաբերյալ տվյալներում և վերոնշյալ սուբյեկտների կողմից իրենց հայտարարագրում ներկայացված եկամուտների աղբյուրները նույնական են:*

Միննույն ժամանակ առկա է եղել դեպք, երբ հայտարարատուի կողմից պարզաբանմանը կից ներկայացված բանկային քաղվածքներով հավաստվել է վերջինիս կողմից ներկայացված եկամտի վերաբերյալ տվյալների հավաստիությունը, ինչի արդյունքում արձանագրվել է անհամապատասխանության բացակայություն:

### **Շահերի վերաբերյալ դեպքերը՝**

Հայտարարատուների կողմից հայտարարագրված շահերին վերաբերող տվյալների առնչությամբ հայտնաբերվել են թվով 8 անհամապատասխանություններ, որոնցից 5-ը վերաբերել են հայտարարատուի ոչ առևտրային կազմակերպություններին անդամակցության վերաբերյալ չհայտարարագրված տվյալներին, 3-ը՝ առևտրային կազմակերպությունների վերաբերյալ չհայտարարագրված տվյալներին:

*Հանձնաժողովը, հաշվի առնելով իր կողմից կայացված նախկին որոշումներով ձևավորված իրավակիրառ պրակտիկան, ինչպես նաև դիտարկելով վերոթվարկյալ արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ դեպքերի արդյունքում հանրային հաշվետվողականության ապահովման հնարավորությունը, կոռուպցիոն տեսանկյունից ռիսկայնությունն ու հանրային վրանգավորության աստիճանը, վերոնշյալ անհամապատասխանությունների վերաբերյալ քննարկման արդյունքում մի շարք դեպքեր որակվել են նվազ նշանակության՝ հետևյալ հիմքերի առկայությամբ պայմանավորված.*

- Թեև առևտրային կազմակերպության գործունեության դադարեցման և/կամ ժամանակավոր դադարեցման վերաբերյալ տվյալներ հայտարարագրում առկա չեն եղել, այնուամենայնիվ առևտրային կազմակերպության՝ վերաբերելի ժամանակահատվածի ընթացքում փաստացի գործունեություն իրականացնելու, իրացման շրջանառության, ինչպես նաև շահույթի ստացման վերաբերյալ տվյալներ առկա չեն եղել:

- Պաշտոնատար անձի ընտանիքի անդամների հայտարարագրերում, ինչպես նաև իրենց հայտարարագրի՝ ընտանիքի կազմին վերաբերող բաժնում առկա են եղել

հայտարարագրված այնպիսի տվյալներ, որոնցով հնարավոր է բացահայտել պաշտոնատար անձի ընտանիքի անդամի առնչությունն առևտրային կազմակերպություններին:

- Ոչ առևտրային կազմակերպություններին անդամակցության վերաբերյալ տվյալների չհայտարարագրումն այնպիսի հանրային վտանգավորություն չի ներկայացրել, որի արդյունքում էական վնաս կպատճառվեր շահերի հայտարարագրման գործիքակազմի միջոցով կանոնակարգվող իրավահարաբերություններին: Նշվածից բացի, կուսակցություններին անդամակցության տվյալներին առնչվող դեպքերի պարագայում էական է համարվել այն հանգամանքը, որ հայտարարատուի անդամակցությունը կոնկրետ կուսակցությանն ինքնին հանրության շրջանում հանրահայտ տվյալ է, որը օբյեկտիվորեն հնարավոր չէր թաքցնել:

- Կից ներկայացվում է նաև Որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված՝ Հանձնաժողովի անդամների հայտարարագրերի վերլուծության արդյունքների մասին արձանագրությունը:

Որոշմամբ սահմանված ռիսկային չափորոշիչի հիման վրա իրականացված հայտարարագրերի վերլուծության արդյունքում հայտնաբերված՝ նվազ նշանակության որակված վերոշարադրյալ դեպքերում, Հանձնաժողովը որոշել է հայտարարատու անձանց 2021 թվականի հայտարարագրերի վերլուծությունը համարել ավարտված:

Որոշման հիման վրա թվով 4 հայտարարատու անձանց 2021 թվականի տարեկան հայտարարագրի վերլուծության արդյունքում վեր են հանվել այնպիսի անհամապատասխանություններ, որոնց արժանահավատությունն ու ամբողջականությունը ստուգելու նպատակով պահանջվում են ըստ տարիների հայտարարագրված տվյալների համադրություն, որի կապակցությամբ մասնավորապես Հանձնաժողովը սահմանել է նոր ռիսկային չափորոշիչ՝ 2023 թվականի մայիսի 29-ին ընդունելով թիվ 01-Լ որոշումը (հղումը՝ <https://cpcarmenia.am/files/legislation/1063.pdf>):

Միաժամանակ, վերոնշյալ Որոշմամբ հաստատված ցանկում ներառված այն պետական պաշտոնները զբաղեցնող անձինք, որոնց (այդ թվում՝ նրանց ընտանիքի անդամների) կողմից ներկայացված հայտարարագրերում տվյալների արժանահավատությունը և ամբողջականությունը ստուգելու նպատակով պահանջվել է ըստ տարիների հայտարարագրված տվյալների համադրում, ընդգրկվել են նաև 2023 թվականի մայիսի 26-ին ընդունված թիվ 01-Լ որոշմամբ 2022 թվականի հայտարարագրերի վերլուծության ենթակա ցանկում:

# ՔԱՂՎԱԾՔ

## ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

24.07.2023թ. ՆԻՍՏԻ

### Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ Ա Ն

2023 թվականի հուլիսի 24-ին տեղի ունեցավ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Նիստին մասնակցում էին Հանձնաժողովի նախագահ Հայկուհի Հարությունյանը, Հանձնաժողովի անդամներ Լիլիթ Ալեքսանյանը, Արամայիս Փաշինյանը, Նարեկ Համբարձումյանը և Մարիամ Գալստյանը:

Համաձայն «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 21-րդ հոդվածի 5-րդ մասի՝ նիստը իրավագոր էր, քանի որ դրան ներկա էին Հանձնաժողովի հինգ անդամ:

Օրակարգում ներառված էր Հանձնաժողովի անդամներ Մարիամ Գալստյանի, Լիլիթ Ալեքսանյանի, Նարեկ Համբարձումյանի և Արամայիս Փաշինյանի և նրանց ընտանիքի անդամների հայտարարագրերի վերլուծությունների արդյունքների ներկայացումը:

1. Քննարկվեց Մարիամ Գալստյանի և նրա ընտանիքի անդամների՝ Հանձնաժողով ներկայացված 2021 թվականի պաշտոնեական պարտականությունները ստանձնելու, 2021 և 2022 թվականների տարեկան հայտարարագրերի վերլուծության արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ հարցը, մասնավորապես՝

Մարիամ Գալստյանը 2021 թվականի պաշտոնեական պարտականությունները ստանձնելու և 2021 թվականի տարեկան հայտարարագրերում հայտարարագրել է 786,100 ՀՀ դրամ ԵԱՀԿ-ից քաղաքացիաիրավական այլ պայմանագրերից ստացված եկամուտ, սակայն Պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվությամբ նշվածի վերաբերյալ տվյալներ առկա չեն:

Մարիամ Գալստյանի՝ ԵԱՀԿ -ից քաղաքացիաիրավական այլ պայմանագրերից ստացված 786,100 ՀՀ դրամ եկամտի ստացման փաստը չի հիմնավորվում Պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվությամբ:

Մարիամ Գալստյանի քաղաքացիաիրավական պայմանագրով կատարված աշխատանքի բնույթը հայտնի չէ:



Արձանագրված անհամապատասխանության վերաբերյալ Մարիամ Գալստյանը ներկայացրեց հետևյալ պարզաբանումը.

ԵԱՀԿ-ում քաղաքացիաիրավական պայմանագրով կատարված աշխատանքը եղել է կրթական բնույթի աշխատանք, որի արժանահավատության հավաստման համար ներկայացրեց տվյալ պայմանագրի պատճենը: Մարիամ Գալստյանը ԵԱՀԿ-ից քաղաքացիաիրավական այլ պայմանագրերից ստացված 786,100 ՀՀ դրամ եկամտի ստացումը հավաստելու համար ներկայացրեց իր՝ [REDACTED] ընկերության բանկային հաշվի քաղվածքը, որտեղ արտացոլված էր ԵԱՀԿ -ից 786,100 ՀՀ դրամ փոխանցումը:

Հանձնաժողովը Մարիամ Գալստյանի ընտանիքի անդամների հայտարարագրերում որևէ անհամապատասխանություն չի հայտնաբերել:

Քննարկելով վերը նշված հարցերը, ինչպես նաև Մարիամ Գալստյանի կողմից ներկայացված պարզաբանումները՝ Հանձնաժողովը Մարիամ Գալստյանի գույքային դրության օրինականության և հայտարարագրված տվյալների արժանահավատության և ամբողջականության վերաբերյալ խնդիր չի արձանագրել:

2. Քննարկվեց Լիլիթ Ալեքսանյանի և նրա ընտանիքի անդամների Հանձնաժողով ներկայացրած 2021 և 2022 թվականների տարեկան հայտարարագրերի վերլուծության արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ հարցերը, մասնավորապես՝

Կենտրոնական բանկից ստացված տեղեկատվության համաձայն՝ 2021 թվականի ընթացքում Լիլիթ Ալեքսանյանի՝ [REDACTED] ընկերության թվով 3 (երեք) հաշվեհամարներին կատարվել են համապատասխանաբար 3,678,740.85 ՀՀ դրամի, 2,577,096.75 ՀՀ դրամի, 663,995.89 ՀՀ դրամի համախառն մուտքեր, իսկ նշված հաշվեհամարներից համախառն ելքեր առկա չեն:

Վերոնշյալ հաշվեհամարներից երկուսի 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա մնացորդները նույնական են Լիլիթ Ալեքսանյանի 2021 թվականի տարեկան հայտարարագրում՝ «Ստացված վարկերի և փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ» բաժնում, հայտարարագրված վարկերի մայր գումարների մնացորդների հետ:

Կենտրոնական բանկից ստացված տեղեկատվության համաձայն՝ 2021 թվականին Լիլիթ Ալեքսանյանն իր [REDACTED] կրեդիտ քարտը համալրել է 390,995.09 ՀՀ դրամով՝ որպես վարկի մայր գումարի մարմանն ուղղված վճար:

Լիլիթ Ալեքսանյանը 7,310,828.58 ՀՀ դրամի (3,678,740.85 + 2,577,096.75 + 663,995.89 + 390,995.09 = 7,310,828,58) վարկի մայր գումարներին ուղղված առերևույթ վճարները չի հայտարարագրել 2021 թվականի տարեկան հայտարարագրում՝ «Ծախսերի հայտարարագիր» բաժնում:

Հանձնաժողովը Լիլիթ Ալեքսանյանի ընտանիքի անդամների հայտարարագրերում որևէ անհամապատասխանություն չի հայտնաբերել:

Քննարկելով վերը նշված հարցերը, ինչպես նաև Լիլիթ Ալեքսանյանի կողմից ներկայացված պարզաբանումները՝ Հանձնաժողովը Լիլիթ Ալեքսանյանի գույքային դրության օրինականության և հայտարարագրված տվյալների արժանահավատության և ամբողջականության վերաբերյալ խնդիր չի արձանագրել՝ հաշվի առնելով ներկայացված այն փաստը, որ Լիլիթ Ալեքսանյանի՝ [REDACTED] ընկերության թվով 3 (երեք) հաշվեհամարները հանդիսացել են վարկային հաշիվներ. Լիլիթ Ալեքսանյանը այդ հաշիվներին մուտքագրել է իր աշխատավարձից ստացած օրինական եկամուտները՝ որպես վարկային պարտավորության կատարում: Այդ հիմքով Հանձնաժողովն արձանագրում է նաև, որ վարկի մայր գումարին ուղղված առերևույթ վճարները՝ որպես իրականացված ծախսեր, համապատասխանում են ստացված օրինական եկամուտներին:

3. Քննարկվեց Նարեկ Համբարձումյանի և նրա ընտանիքի անդամների կողմից Հանձնաժողով ներկայացրած 2021 և 2022 թվականների տարեկան հայտարարագրերի վերլուծության արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ հարցերը, մասնավորապես՝

3.1 Նարեկ Համբարձումյանը 2021 թվականի տարեկան հայտարարագրի «Բ.6.5. Կանխիկ դրամ» բաժնում հայտարարագրել է տարեսկզբին առկա կանխիկ դրամ՝ 15,000 ԱՄՆ դոլարի և 15,000,000 ՀՀ դրամի չափով՝ ծագման աղբյուրը նշելով նվիրատվություն: Նվիրատուն/նվիրատուները, նրանց հետ կապի բնույթը հայտնի չէ:

3.2 Նարեկ Համբարձումյանը 2022 թվականի տարեկան հայտարարագրի «Բանկային հաշիվների մնացորդներ (բացառությամբ ավանդների)» բաժնում հայտարարագրել է [REDACTED] ում 01/01/2022

թվականի դրությամբ առկա 11,717.38 ԱՄՆ դոլար, իսկ 31/12/2022 թվականի դրությամբ առկա 76,226 ՀՀ դրամ: Համաձայն ԿԲ տրամադրած տեղեկության՝ [REDACTED] [REDACTED] ում Նարեկ Համբարձումյանի դոլարային հաշիվների մնացորդները 01/01/2022 թվականի դրությամբ կազմել են 11,717.38 ԱՄՆ դոլար, 31/12/2022 թվականի դրությամբ՝ 76,226.36 ԱՄՆ դոլար:

3.3 Նարեկ Համբարձումյանը 2021 թվականի տարեկան հայտարարագրի «Առկա են հանձնած և վերադարձված փոխառություններ» բաժնում հայտարարագրել է էրիկ Ասատրյանին հանձնած փոխառություն, տվյալ տարվա վերջում առկա փոխառության գումարը նշել է 3612, սակայն «արժույթը» դաշտում տվյալներ առկա չեն: 2022 թվականի տարեկան հայտարարագրում վերոնշյալ արժույթը նշված է ՀՀ դրամ:

Արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ Նարեկ Համբարձումյանը ներկայացրեց պարզաբանումներ, մասնավորապես՝

1-ին կետում նշված կանխիկ գումարի ծագման աղբյուրի վերաբերյալ Նարեկ Համբարձումյանը նշեց, որ 2017 թվականին հայտարարագրել է տարբեր արժույթներով մոտավորապես 200,000 ԱՄՆ դոլարի չափով գումար, որը նվիրաբերել է իր հայրը, ով հանդիսանում է [REDACTED]-ի ղեկավար. 1998 թվականից հայրը զբաղվում է [REDACTED] արտադրությամբ:

2-րդ կետում նշված անհամապատասխանության վերաբերյալ Նարեկ Համբարձումյանը նշեց, որ արժույթը ԱՄՆ դոլարի փոխարեն սխալմամբ է ՀՀ դրամ նշել: Նարեկ Համբարձումյանը ներկայացրել է նշված անհամապատասխանության հիմք հանդիսացող փաստաթղթերը պայմանագիրը և մուտքի անդորրագիրը, ինչի արդյունքում Հանձնաժողովը հավաստիացել է, որ բանկային հաշիվների մնացորդների ծագման աղբյուրը նշված փաստաթղթերով հիմնավորվող գործարքն է, ծագման օրինականության խնդիր առկա չէ:

3-րդ կետում նշված անհամապատասխանության վերաբերյալ Նարեկ Համբարձումյանը նշեց, որ արժույթը ճիշտ չի արտացոլվել:

Հանձնաժողովը Նարեկ Համբարձումյանի ընտանիքի անդամների հայտարարագրերում որևէ անհամապատասխանություն չի հայտնաբերել:

Քննարկելով վերը նշված հարցերը, ինչպես նաև Նարեկ Համբարձումյանի կողմից ներկայացված պարզաբանումները և փաստաթղթերը՝ Հանձնաժողովը Նարեկ Համբարձումյանի գույքային դրության օրինականության և հայտարարագրված

տվյալների արժանահավատության և ամբողջականության վերաբերյալ խնդիր չի արձանագրել:

4. Քննարկվեց Արամայիս Փաշինյանի և նրա ընտանիքի անդամների կողմից Հանձնաժողով ներկայացրած 2021 թվականի տարեկան և 2022 թվականի պաշտոնական պարտականությունները դադարեցնելու հայտարարագրերի վերլուծության արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ հարցերը, մասնավորապես՝

Համաձայն Կենտրոնական բանկի տրամադրած տեղեկության՝ Արամայիս Փաշինյանի հաշիվների մնացորդները 01/01/2021 թվականի դրությամբ կազմել են 1,746,632.57 ՀՀ դրամ, 11,230.02 ԱՄՆ դոլար: Արամայիս Փաշինյանը 2021 թվականի տարեկան հայտարարագրի «Առկա են բանկային հաշիվների մնացորդներ» բաժնում 01/01/2021 թվականի դրությամբ հայտարարագրել է 1,364,903.00 ՀՀ դրամ, 1,228.00 ԱՄՆ դոլար, «Հանձնած և վերադարձված ավանդներ» բաժնում հայտարարագրել է 01/01/2021 թվականի դրությամբ առկա 675,945.1 ՀՀ դրամ, 10,000.00 ԱՄՆ դոլար ավանդ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԿԲ տրամադրած տվյալները հնարավոր է պարունակեն նաև ավանդները՝ անհամապատասխանությունը ԿԲ տրամադրած տեղեկության և 2021 թվականի տարեկան հայտարարագրում հայտարարագրած տվյալների միջև կազմում է 294,215.53 ՀՀ դրամ:

Արձանագրված անհամապատասխանության վերաբերյալ Արամայիս Փաշինյանը ներկայացրեց պարզաբանում, մասնավորապես՝

[REDACTED] ընկերությունում իր ունեցած ավանդային հաշվի քաղվածքը, ըստ որի՝ նշված բանկում 01/01/2021 թվականի դրությամբ առկա է եղել 296,371,50 ՀՀ դրամի չափով ավանդ, որը հայտարարագրվել էր 2021 թվականի տարեկան հայտարարագրի «Հանձնած և վերադարձված ավանդներ» բաժնում, սակայն նշված ավանդի վերաբերյալ տվյալներ Կենտրոնական բանկի տրամադրած տեղեկությունում առկա չէր, ինչն էլ հանդիսացել է արձանագրված անհամապատասխանության պատճառը:

Հանձնաժողովը Արամայիս Փաշինյանի ընտանիքի անդամների հայտարարագրերում որևէ անհամապատասխանություն չի հայտնաբերել:

Քննարկելով վերը նշված հարցերը, ինչպես նաև Արամայիս Փաշինյանի կողմից ներկայացված պարզաբանումները՝ Հանձնաժողովը Արամայիս Փաշինյանի գույքային

դրության օրինականության և հայտարարագրված տվյալների արժանահավատության և  
ամբողջականության վերաբերյալ խնդիր չի արձանագրել: